ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԿՐՕՆՔ ՀՆԴԿԱՑ*

ԱՇԽԱՐՀԻՍ ստեղծումն.— Պրահմ.— Պրահմա.— Վիշնու.— Սիւա.— Հնդկաց կրօնից նկատմամբ երկու զանազան դար նկատելու է. հին դար՝ որուն առասպելներն մեծ նմանութիւն ունին Յունաստանի առասպելաց հետ, և նոր դար՝ որ երկրորդակարգ համարեր է աստուածներն և հին առասպելներն, որպէս զի անոնց տեղ աւելի այլանդակ, բայց ըստ երևութին փիլիսոփայական առասպելներ անցնէ։

Հին Հնդկաստանի գլխաւոր աստուածն էր Ինդրա, շանթահար և ամենեւին Արամազդայ նման։— Փոթորկի ատեն կը կռուէր օձամարմին ճիւաղին՝ Վրեդրա դիւին հետ, որ անձրևաց բարերար ջրերն իւր կողաց մէջ բռնած կը պահէր։ Ինդրայի հետ էր և Ակնի, աստուած հրոյ, և երկուքն ալ Մարդուտ բանակը կը գործածէին, որ են նպաստաւոր հողմունք՝ որ ամպերը կը հալածեն և զոհին կրակը կ'արծարծեն։— Միւս գլխաւոր աստուածներն էին Արշալոյս, Ասուրինք կամ ասպետք, նման Կաստորի և Պոլիտևկիսի և առաւօտեան արշալոյսն և երեկոյեան վերջալոյսքն են. Վարուռմնա՝ երկինք գիշերոյ, Ուրանոսն Յունաց. Ատիդի, երկիր, մայր արեգակնային երկոտասան աստուածոց, Սաւեդրայի, Միդրայի, Վիշնուի և այլն. Եամա՝ աստուածն մեռելոց. Գիտորիսք կամ ոգիք նախնեաց, և ուրիշ շատեր։

Աստուածային միութեան գաղափարն որ Հնդկաստանի հին ա-

* Հնդկաց ազգն, որ հնութեամբն և գիտական զարգացմամբ շատ նշանաւոր եղեր է, իւր կրօնական թանձր մոլորութեանց մէջ ևս ունի ճշմարտութեան հետքեր, որոնք կարող են զարգացեալ դարուս կամակոր մտքերը կշտամբել և համոզել։ Սոյն նպատակաւ ահա կ'ուզենք համառօտ գաղափար մի տալ անոնք կրօնքին վերայ։

digitised by A.R.A.R.@

ռասպեՀներուն մէջ կը տեսնուի, աւելի որոշ է և բացայայտ նոր ա-
ռասպեՀներու մէջ իրենց այլանդակ խառնուրդով հանդերձ։

Գերագոյն Աստուծոյ մը վարդապետութիւնը կ'ընդունին, որուն
միւսներն արտաքին յայտնութիւնք են։ Անոր անունը Պրահմ է, իր-
մէ դուրս երեք աստուած կան, Պրահմա, Սիւա և Վիշնու։

Պրահմա՝ յօրինող աշխարհի, Վիշնու՝ պահապան ստեղծագործու-
թեան, և Սիւա՝ աստուած ապականիչ։ Այս երեք աստուածոց միու-
թիւնն կը կազմէ Ցրիմուրթին կամ հնդկային Երրորդութիւնը։

Ցրիմուրթի։— կը նկարեն զՑրիմուրթի երեք գլուխ մի միայն
մարմնոյ վրայ։— Մէկ ձեռքով էակաց շղթայն բռնած է, միւսովն զեր-
կիր բեղնաւորող ջրոյ սափորն։— Զախ կողմն կեցած է Վիշնու պա-
տանեկան և սիրելի դիմաք. աջ կողմն կեցած է Սիւա՝ վայրագ բար-
բարոսութեան կերպարանքով։

Զ Պրահմա բովանդակող ոսկի հաւկիթն ջրոյ մակերևութիւն վրայ
կը ծփար. երբ աստուածն անկէ դուրս ելաւ՝ կոտրած կեղևն երկու
մասս բաժնուեցաւ, որուն մէկ մասն երկինք՝ միւս մասն երկիր ե-
ղաւ. ընդ մէջ երկնի և երկրի՝ Պրահմա դրաւ զեղեցն, կարգաւ
ստեղծեց աստղերն, բոյսերն, ծառք և կենդանիք։ Երբ երկիրն պա-
տրաստուեցաւ և կրնար ընդունել մարդը, Պրահմա նախ իւր գլխէն
հանեց Պրահմանա անունով մարդ մը, որուն տուաւ վեհագոյն նուի-
րակոն գրքերը, ուր աւանդուած էր ճշմարտութիւնն։— Պրահմանա-
յէն ծնան Պրահմանայք, որք կրօնքը պիտի պահէին երկրիս վրայ։ Ա-
պա Պրահմա իւր աջ բազուկէն հանեց զինուոր մը, քահանայն պաշտ-
պանելու համար. իւր ազդրերէն երրորդ մարդ մը հանեց, երկրագործ
և վաճառական, որպէս զի քահանայն և զինուորն սնուցանեն և հա-
ղրըստացնեն, վերջէն չորրորդ մարդ մ'ելաւ իւր ոտքէն, որպէս զի հայր
ըլլայ արուեստաւորաց՝ որ այլոց համար պիտի աշխատին։ Պրահ-
մայէն ձևացած այս ծագմամբ և նպատակաւ զանազան չորս պրա-
բածներէն յառաջ եկած են Հնդկաստանի ժողովրդոց դասակար-
գերն։ Վերջին կարգն, Պարիայից կարգն, որ միւս կարգաց խեչե-
բանքներէն ձևացած է, զատ է Պրահմայի որդիքներէն, գարշելի և
ամենայն նախատանաց և խեղճութեանց ենթակայ։

Պրահմա, աշխարհքը կարգաւորելէն ետքը, այնպէս գուռոզացաւ
և այնչափ բռնութիւններ գործեց, որ իւր եղբարանց ի պատուհաս՝
Պրահմ կամ Պհակաւադ. գերագոյն զօրութիւնն զինքը յանդունդս
ձգեց։ Նա որպէս զի կարենայ նորէն իւր կարգը բռնել իւր երկու եղ-
բարց՝ Վիշնու և Սիւայի քով, ի բնավայրն աստուածոց, չորս այլ և
այլ դարերու մէջ երկրիս վրայ երևեցաւ։— Նախ բանաստեղծ ագ-
ռաւի կերպարանքով երևեցաւ. ետքը պարիայի դէմքով և Վալմիքի
անուամբ երևցաւ. այս կերպարանաց մէջ նախ անգութ աւազակ,

digitised by A.R.A.R.@

ապա խիստ ապաշխարող մ'եղաւ. վեստային նուիրական գրքերը՝ զոր իւր անկումէն առաջ շարագրեր էր՝ մեկնեց և Ռամայանա մեծ քը-նարերգականը հրատարակեց։ Դար մը ետքը Վիրազա հռչակաւոր բանաստեղծին անուամբ մէջ տեղ ելաւ, որ Հնդկաստանի մեծամեծ դիւցազներգութեանց մեծ մասն շարագրած էր. վերջապէս երկաթի դարուն մէջ եկաւ Քալիդասա անուամբ, Հնդկաստանի թատերական հիանալի բանաստեղծութիւնները աշխատասիրեց։

Վիշնուի մարմնափոխութիւնք աւելի են քան զՊրահմայիներն։— իւր պաշտօնն աշխարհիս պահպանութիւն էր. ամէն անգամ որ երկիրս ձախորդութեան մը հանդիպէր՝ անվրէպ օգնութեան կը հասնէր։

Հսկայ մը տարեր էր վեստաներն և երկիրս ճշմարտութեան այս աղբիւրէն զրկուած՝ բարբարոսութեան մէջ ինկնալու վրայ էր։ Վիշ-նու երկայն ատեն երկրիս վրայ պտըտեցաւ առանց գոյը գտնելու. վերջապէս իմացաւ որ գոյն իւր գողունիով ծովուն խորը ծածկուեր էր. ձկան կերպարանքը գնաց հսկային որոյը մտաւ, ապանեց զնա և սուրբ գրքերը առաւ մարդոց մէջ բերաւ։

Աստուածք անմահութիւն տուող ըմպելի մը հնարեր էին. չար ո-գիներն միշտ հակառակորդք աստուածոց, ուզեցին այդ ըմպելին ձեռք ձգել։ Անոնց յարձակումն ահեղ եղաւ, և այս առթիւ եղած պատերազմն զաշխարհս տակն ու վրայ ըրաւ և զՄերու[1] լեռն ծովը ձգեց։— Ստեղծագործութիւնն նորէն ի քաւոսն կը դառնար, երբ Վիշնու կրիայի կերպարան առնելով իւր պատենին վրայ առաւ աշ-խարհաց ծանր բեռն, և տիեզերաց կործանմանն առջևն առաւ։ Այ-սու երկիրն իւր սովորական դիրքն առաւ և ամենայն ինչ կարգի մտաւ։ Ցանկարծ աստուածային ըմպելիէն քանի մի կաթիլ ծովու ջրին հետ խառնուելով՝ ծովը մասամբ կաթի լիճ փոխեցին, ուստի ելան եռապատիճ սպիտակ փիղ մի մեծ և եռագլուխ խրոխտ ձի մի։

Ուրիշ անգամ այլ երկիրս պիտի ոչընչանար. սոսկալի հսկայ մի տակ-կըցնելով և գլորտելով զայն՝ անգունդը կը տանէր։ Վիշնու վարազի կերպարանքը առաւ, հսկայի եռուէն ինկաւ, հասաւ և յաղթեց. եր-կիրն ամփոփելով իւր յաղթական ժանիքներով բերաւ տեղը դրաւ։ Վիշնու առիւծի կերպարանքը մտաւ հսկայի մը յաղթելու համար, ո-րուն գոռոզութիւնն և ամբարշտութիւնն մարդկային ազգը կ'ապակա-նէր։ Աստուածային առիւծն սիւնէ մը դուրս ցատկեց հրեշին վրայ և անոր մարմինը բզիկ բզիկ ըրաւ։

Քաղեալ 'ի դիցաբանութենէ

Շարունակելի

Հ. ՆԵՐՍԷՍ Վ՚. ՃՆՇՈՑԵԱՆ

1. Մերու՝ դից բնավայրն է, Հնդկաստանի Ղիմպոսն։

digitised by A.R.A.R.@